«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ ք. Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝easm.himnark@gmail.com

«20» նոյեմբերի 2025թ.

«ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
/Հասցե՝ Երևան, Գ. Աղաբաբյան, փ. 1/26/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

2025 թվականի մայիսի 21-ին «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված հ. ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-25/13 ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը պայմանագրով Պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզել է, որ Կատարողի կողմից խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ծառայությունների խիստ անհրաժեշտությունը՝ սույն թվականի նոյեմբերի 5-ին «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ին է հասցեագրել գրություն՝ հ. ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-25/13 ծածկագրով պայմանագրի շրջանակներում՝ խափանված 513CC61 պետհամարանիշով ՈՒԱԶ պիկապ բեռնաուղևորատար տրանսպորտային միջոցը ք.Երևան, Շիրակի 88/1 հասցեից վերանորոգման կայան տեղափոխելու վերաբերյալ:

14.11.2025 թվականին «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ին կրկին հասցեագրվել է գրություն՝ առաջարկելով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 18-ը ներառյալ խափանված 513CC61 պետհամարանիշով ՈՒԱԶ պիկապ բեռնաուղևորատար տրանսպորտային միջոցի տեղափոխումը նորոգման կայան և/կամ տեղում արագ նորոգումը իրականացնելու վերաբերյալ:

Միաժամանակ 14.11.2025թ. գրությամբ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ին իրազեկել է, որ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով ծառայությունների մատուցման պարտավորությունը չկատարելու պարագայում «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի միջև 21.05.2025թ. կնքված N ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-25/13 ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը միակողմանի կլուծվի:

Այնինչ ներկայացված գրություններին որևէ պատասխան չի տրվել և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊ ընկերության կողմից հ. ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-25/13 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետում չի իրականացվել խափանված 513CC61 պետհամարանիշով ՈՒԱԶ պիկապ բեռնաուղևորատար տրանսպորտային միջոցի տեղափոխումը նորոգման կայան և/կամ տեղում արագ

նորոգումը, որի պարագայում Կատարողի կողմից խախտվել է պայմանագրով ծառայությունների մատուցման պարտավորությունները:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն՝ Կատարողը պետք է իրականացնի արագ արձագանքման եղանակով Հիմնարկին պատկանող վթարված և/կամ խափանված տրանսպորտային միջոցի տեղափոխումը նորոգման կայան և/կամ տեղում արագ նորոգումը: Կատարողը պետք է ծառայությունը մատուցելիս ի հայտ եկած թերությունների արդյունքում անհրաժեշտության դեպքում փոխարինի խափանված (չաշխատող) պահեստամասերը գործարանային արտադրության նոր պահեստամասերով:

Ախտորոշման համար առավելագույն ժամկետ՝ 1 օրացուցային օր, վերանորոգման համար առավելագույն ժամկետ՝ 4 օրացուցային օր:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ միակողմանի մասնակի (3.409.015 ՀՀ դրամի չափով) լուծում է պայմանագիրը՝ *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման

ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերերդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ համապատասխանաբար 340.901 (երեք հարյուր քառասուն հազար ինը հարյուր մեկ) ՀՀ դրամ և 511.352 (հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր հիսուն երկու) ՀՀ դրամ Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված՝ համապատասխանաբար «900008000664» և «900008000698» գանձապետական հաշվեհամարներին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ

ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ